

**ՀԱՅՔԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՈՒԹՅԱՆ  
ՋԵՎԱՎՈՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ**

**Գ. Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

1920—1922 թթ. ընթացքում խորհրդային Հայաստանը «ինքնուրույն» էր վարում իր արտաքին քաղաքականությունը: 1922 թ. փետրվարի 2-ին Հայաստանի Սոցիալիստական խորհրդային Հանրապետության խորհուրդների I համագումարում ընդունված Հայաստանի Սոցիալիստական խորհրդային Հանրապետության սահմանադրության 37 հոդվածը սահմանում էր, որ Հայաստանի խորհուրդների համագումարի և Կենտգործկոմի վարմանն են ենթակա արտաքին քաղաքականության ընդհանուր ղեկավարման և օտարերկրյա պետությունների հետ հարաբերությունների հարցերը<sup>1</sup>: Ստեղծվել էր արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատ: Ճիշտ է, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդ մարմինը երբեք ինքնուրույն չի գործել, սակայն փաստը մնում է փաստ, որ կար այդպիսի մարմին և հանրապետությունն այդ իրավասությունը ուներ:

Վիճակը փոխվեց 1922 թ., երբ մարտին անդրկովկասյան 3 հանրապետությունները՝ Հայաստանը, Վրաստանը և Ադրբեյջանը, միավորվեցին՝ կազմելով Անդրկովկասի Սոցիալիստական խորհրդային Հանրապետությունների Ֆեդերատիվ Միություն, իսկ ղեկավարեցին կազմավորվեց ԽՍՀՄ-ը: Հանրապետությունները զրկվեցին արտաքին ինքնուրույն քաղաքականություն վարելու իրավասությունից, և այն վերապահվեց միութենական մարմիններին: 1924 թ. հունվարի 31-ին ընդունված ԽՍՀՄ սահմանադրությունը նախատեսում էր, որ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատն ընդհանուր միութենական մարմին է, որը հանրապետություններում ունի իր կողմից նշանակվող լիազորներ<sup>2</sup>: Այսպիսով, հանրապետությունները զրկված էին օտարերկրյա պետությունների հետ որևէ հարաբերության մեջ մտնելու հնարավորությունից:

Այսպես շարունակվեց մինչև 1944 թ. փետրվարի 1-ը, երբ ԽՍՀՄ Գերագույն խորհուրդն ընդունեց «Արտաքին հարաբերությունների բնագավառում միութենական ռեսպուբլիկաներին լիազորություններ վերապահելու և այդ կապակցությամբ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատն ընդհանուր-միութենականից միութենական-ռեսպուբլիկական ժողովրդական կոմիսարիատի վերակազմելու մասին» օրենքը<sup>3</sup>, Դրա հիման վրա միութենական հանրապետությունները, այդ թվում և Հայաստանը, ընդունեցին համապատասխան օրենքներ: 1944 թ. մարտի 18-ին ընդունվեց «Հայկական ՍՍՌ միութենական-ռեսպուբլիկական արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատ կազմելու մասին» օրենքը, որով սահմանվում էր. «1. Կազմել Հայկական ՍՍՌ միութենական-ռեսպուբլիկական Արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատ»:

2. Հայկական ՍՍՌ Կոնստիտուցիայի մեջ մտցնել հետևյալ լրացումները.

ա) Հայկական ՍՍՌ Կոնստիտուցիան լրացնել 15-ա հոդվածով հետևյալ բովանդակությամբ.

<sup>1</sup> История советской конституции (1917—1956 гг.) в документах, М., 1957, с. 326.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 470:

<sup>3</sup> Ведомости Верховного Совета СССР, 1944, № 8.

«Հոդված 15-ա. Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկան իրավունք ունի անմիջական հարաբերությունների մեջ մտնել օտարերկրյա պետությունների հետ, նրանց հետ կնքել համաձայնագրեր և փոխանակել դիվանագիտական ու հյուպատոսական ներկայացուցիչներ...»<sup>4</sup>,

Սակայն դա միայն ձևական բնույթ ունեցող ակտ էր 1990 թ. դրությամբ խորհրդային Հայաստանն աշխարհի և ոչ մի երկրում չուներ դիվանագիտական ներկայացուցչություն կամ հյուպատոսություն, չնայած դրա իրավունքը նրան վերապահված էր հանրապետության սահմանադրությամբ։ Պատճառը, իհարկե, այն չէր, որ Հայաստանը կարիք չուներ օտարերկրյա պետությունների հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու, այլ այն, որ այդ հարցի տնօրինումը միայն ձևականորեն էր վերապահված հանրապետության իրավասությանը։ Իրականում կենտրոնը արտաքին հարաբերությունների բնագավառի ողջ լծակները փաստացի պահում էր իր ձեռքում։

Ժողովրդավարական շարժման հետևանքով 1990 թ. ամռանը իշխանության գլուխ անցան նոր ուժեր, որոնք մտադիր չէին առաջնորդվել կենտրոնի հրահանգներով և նպատակ էին դրել ստեղծել անկախ հայկական պետություն՝ իր բոլոր հատկանիշներով։

1991 թ. օգոստոսի 5-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահության որոշմամբ սկսվեց անկախ պետականության հաստատման գործընթաց նշանակվեց Հայաստանի Հանրապետության առաջին ներկայացուցիչը արտասահմանում։ Սա, իհարկե, դեռ դիվանագիտական ներկայացուցչություն չէր իր դասական հասկացությամբ, սակայն Հայաստանը դրանով առաջին քայլը կատարեց այդ ուղղությամբ։ Հայաստանի Հանրապետությունն իրավասու էր օտարերկրյա պետություններում նշանակել դիվանագիտական ներկայացուցիչներ։ Բայց կար մի հանգամանք, որն այդ գործը բարդացնում և անարդյունավետ էր դարձնում։ Բանն այն է, որ դիվանագիտական ներկայացուցիչ նշանակելու համար Հայաստանը պետք է դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին միջպետական պայմանագիր կնքեր այն պետության հետ, որտեղ նպատակ ուներ նշանակել դիվանագիտական ներկայացուցիչ։ Մինչդեռ, այդ ժամանակահատվածում, քանի դեռ գոյություն ուներ ՍՍՀՄ-ը, շատ պետություններ նախընտրում էին սպասողական դիրք զբաղել և հետևել դեպքերի զարգացման ընթացքին։ Այնուամենայնիվ, եթե այդպիսի պայմանագիր կնքվեր, միևնույն է, Հայաստանը լինելով ՍՍՀՄ-ի կազմում, չէր կարող լինել անկախ քաղաքականություն վարելու։ Այս առումով կիսաձևական բնույթ կստանար նաև Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությունը։

Դրությունը փոխվեց 1991 թ. սեպտեմբերյան հանրաքվեից հետո, երբ Հայաստանի Հանրապետությունը հայտարարվեց անկախ։ Մինչև 1992 թ. օգոստոսի 5-ը աշխարհի 104 երկրներ ճանաչեցին Հայաստանի անկախությունը, իսկ 59 երկրների հետ հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ<sup>5</sup>։ Լիարժեք հնարավորություն ստեղծվեց վարելու արտաքին ինքնուրույն քաղաքականություն։ Եվ այստեղ առաջացան մի շարք հիմնահարցեր՝ կապված Հայաստանի քաղաքական, տնտեսական, ֆինանսական վիճակի հետ։ Դրանք առաջին հերթին վերաբերում են այն բանին, թե ո՞ր երկրներում է անհրաժեշտ ունենալ դեսպանություններ, ո՞ր երկրներում է դրանց կարիքը քիչ զգացվում, ո՞ր երկրներում կարելի է բավարարվել միայն հյուպատոսություններ ունենալով, հանրապետության ֆինանսական միջոցները թո՛ւյլ են տալիս արդյոք այդ հարցերին պատասխանել միայն ըստ քաղաքական նկատառումների, թե անհրաժեշտ է հաշվի առնել նաև Հայաստանի ֆինանսական հնարավորությունները, օտարերկրյա պետություններ-

<sup>4</sup> Հայկական ՍՍԻ Գերագույն սովետի ութերորդ սեսիան, 1944 թ. մարտի 16—18, սգագրական հաշվետվություն, Երևան, 1945, էջ 191—192.

<sup>5</sup> Տվյալները ստացվել են 22 ԱԳՆ պետական արարողակարգի վարչությունից։



բում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչները պետք է լինեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ, թե՛ դա պարտադիր չէ, կա՞րգյոք այն կարգադրություն, որը կարող է ձևավորել Հայաստանի Հանրապետության ներկայացուցչությունները, թե՛ այն դեռ պետք է պատրաստել, առկա՞ է արդյոք դիվանագիտական ներկայացուցչության կազմավորման և գործունեության համար անհրաժեշտ օրենսդրական բազա:

Այս տեսակետից հետաքրքիր է Հայաստանի Հանրապետության (1918—1920 թթ.) դիվանագիտական ներկայացուցչությունների կազմավորման և գործունեության փորձը: Այն ժամանակ՝ 1918—1920 թթ. «...շնորհիվ քաղաքական և այլ պայմանների՝ մեր արտասահմանյան ներկայացուցչությունը մեծ մասամբ առաջ է եկել պատահաբար, այս կամ այն քաղաքական դեպքի առթիվ (Դենիկինի առաջ գալը, Կուբանի և Թերեքի Հանրապետությունների ծագումը) կամ որևէ գաղութի կամ անձնավորության առաջարկի կամ զեկուցման հիման վրա, մի խոսքով ներկայացուցչությունը առաջ չէ եկել որոշ մշակված ծրագրով կամ սխտեմայով, հիմնված լինելով որոշ տվյալների վրա, որոնք բխել են Հայաստանի տնտեսական և քաղաքական պետքերից և ներկայացուցչության անհրաժեշտությունից...»<sup>6</sup>: Այսպես, Խալիլյանը Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ նշանակելը հիմնավորվում էր նրանով, որ դա «...կհնչեցնի հայկական հումքի մշտական փոխանակումը իտալական մանուֆակտուրայի, մեքենաների և այլ արտադրանքի հետ»<sup>7</sup>: Խալիլյանի հետ դիվանագիտական ներկայացուցչությունների փոխանակումը կատարվեց այն ժամանակ, երբ այդպիսի ցանկություն հայտնեց իտալական կողմը:

Հայաստանի Հանրապետության ներկայացուցչությունների ձևավորման վրա իր ազդեցությունն էր թողնում երկրի ծանր ֆինանսական վիճակը: Հաճախ հարկ էր լինում արտասահմանյան հայաշատ վայրերում հյուպատոսներ նշանակել տեղի հայ համայնքի համաձայնությամբ և ոչ սակավ նրանց կողմից առաջարկվող անձինք էին ստանձնում այդ պաշտոնները: Նման դեպքերում այդ հյուպատոսները ստանում էին պատվակալ հյուպատոսների տիտղոս և նրանց գործունեության ֆինանսավորումը դրվում էր տեղի հայ համայնքի վրա: Ասվածի ապացույց է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի 1920 թ. ապրիլի 29-ի հետևյալ գրությունը Վլադիկավկազում Հայաստանի Հանրապետության հյուպատոս Հակոբ Սառիկյանին. «Առաջարկում եմ Ձեզ քննել և պարզել Գրոդնիի, Կիսլովոդսկի, Պետրովսկի և ընդհանրապես Թերեքի շրջանի մեր հյուպատոսարանների ներկա դրությունը և տեղեկանալ, թե նույն տեղերի հայ համայնքները ընդունում են իրենց վրա վերցնել Հայկական հյուպատոսարանի ծախսերը. հակառակ դեպքում լիազորում եմ Ձեզ վերացնել այդ հյուպատոսարանները և նշանակել պատվակալ հյուպատոսներ, որոնք ստանձնելու են նույն տեղերում հայկական շահերի պաշտպանությունը տեղական համայնքի ներկայացուցիչների հետ:

Պատվակալ հյուպատոսները պետք է ուղղակի Ձեզ հետ կապ պահպանեն և ենթարկվեն Ձեր հյուպատոսարանին»<sup>8</sup>:

Այս փաստաթուղթը վկայում է, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունն արտաքին հարաբերություններում չէր կարող լրիվ ինքնուրույն լինել և, մասնավորապես, տվյալ դեպքում հաշվի էր նստում նաև իր պետական կառուցվածքների մեջ ըմտնող Վլադիկավկազի հայ համայնքի հետ: Սա ուներ նաև մեկ այլ բացասական կողմ: Երբ հայ համայնքը ներկայացնում էր որևէ անձի թեկնածությունը, ապա Հայաստանի Հանրապետության կառավարությունը հնարավորություն չէր ունենում ծանոթանալ այդ

<sup>6</sup> Հայաստանի Հանրապետության պատմության պետական կենտրոնական արխիվ. ֆ. 199, ց. 1, գ. 198, մաս I, ք. 239:

<sup>7</sup> Նույն տեղում, գ. 90, ք. 142:

<sup>8</sup> Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 295, ք. 58:

անձի ունակություններին, գործնական հատկանիշներին, քաղաքական հայացքներին, մինչդեռ նա պետք է ներկայացնեի հանրապետությունն օտարերկրյա պետությունում:

Հարկ է նշել, որ երբեմն այդ պաշտոններում նշանակվում էին անձինք, որոնց նպատակը ամենեին էլ հայկական շահերի պաշտպանությունը չէր: Այդպիսի անձնավորություն էր Սևաստոպոլում Հայաստանի Հանրապետության փոխհյուպատոս Թելքեյանը, որն ունեցել էր քրեական անցյալ: Նա այդ պաշտոնում էլ շարունակում էր հանցավոր գործունեությունը՝ տեղի հայերի վրա հարկ էր դնում հյուպատոսությունը պահելու համար, դրամ էր վերցնում իբր ապրանքները ձեռք բերելու նպատակով և յուրացնում, դրամով վկայական էր տալիս զինվորական ծառայությունից ազատելու համար<sup>9</sup>: Պարզ էր, որ այսպիսի ներկայացուցիչը չէր կարող բարձր պահել Հայաստանի Հանրապետության կառավարության հեղինակությունը և նպաստել Հայաստանի Հանրապետության ու տվյալ պետության միջև նորմալ հարաբերությունների հաստատմանը:

Նետաքրքիր է, որ դիվանագիտական ներկայացուցիչներ նշանակելու իրավունք էր տրված նաև Փարիզի խաղաղության կոնֆերանսի աշխատանքներին մասնակցելու նպատակով Փարիզ գործուղված Հայաստանի Հանրապետության պատվիրակությանը: Այդ նշանակումների մասին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության արտասահմանյան հաստատությունների բաժնի վարիչը հյուպատոսական բաժնին գրում էր. «...Հարկավոր է վերացնել այն իրավունքը, որ տրված է եղել Փարիզի պատվիրակությանը՝ նշանակել Եվրոպայում ներկայացուցիչներ: Պատվիրակությունը այդ գործը կատարել է շատ անսխառն կերպով, հաճախ նշանակելով շատ երկրներում միայն հյուպատոսներ, կամ ոչ ոքի, իսկ հայկական տեսակետից աննշան մյուս երկրներում և դիվանագիտական ներկայացուցիչներ, և հյուպատոս:»

Շատ տեղերում պաշտոնի են անցնում պատահական և անհաջող անձնավորություններ:

Նշանակված լինելով Փարիզի պատվիրակության կողմից, այդ պաշտոնյաները հարկավոր չեն համարում կապ հաստատել մինիստրության հետ, չնայած մեր բազմաճյուղ դիմումներին...»<sup>10</sup>:

Որոշակի հստակություն չկար նաև ներկայացուցիչներ նշանակելու իրավունք ունեցող մարմինների և պաշտոնատար անձանց հարցումը: Մի դեպքում հյուպատոս էր նշանակում արտաքին գործերի նախարարը, երկրորդ դեպքում՝ տվյալ երկրում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչը, երրորդում՝ այդ իրավունքից օգտվում էր տվյալ երկրում նշանակված Հայաստանի Հանրապետության գլխավոր հյուպատոսը, չորրորդում՝ Փարիզի խաղաղության կոնֆերանսի Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը: Եվ զարմանալի չէ, որ լինում էին դեպքեր, երբ արտաքին գործերի նախարարությունը հստակ տվյալներ չէր ունենում, թե տվյալ պահին տվյալ երկրում քանի՞ հյուպատոսներ ունի հանրապետությունը և ովքե՞ր են նրանք:

1919 թ. հուլիսին Ռուսաստանի Հարավում զինված ուժերի գլխավոր հրամանատարին կից հատուկ խորհրդակցությանն առնթրելով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչը գրում էր. «...հայտարարում եմ ի գիտություն և ի կատարում, որ Ռուսաստանի հարավում զինված ուժերի զբաղեցրած տերիտորիաներում բոլոր անձինք, որոնք հանդիսանում են Հայաստանի ներկայացուցիչներ և հյուպատոսներ նախկին Հայկական Ազգային խորհրդի կամ այլ հիմնարկների կողմից ստացված լիազորությունների հիման վրա և ներկայումս չեն նշանակվել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից կամ չեն վերականգնվել պաշտոն-»

<sup>9</sup> Նույն տեղում, գ. 6, թ. 1:

<sup>10</sup> Նույն տեղում, գ. 545, թ. 27:



նում իմ կողմից, այսուհետև համարվում են աղատված գրադեցրած պաշտոններին...»<sup>11</sup>։ Գրությունից երևում է, որ հեղինակն ինքն էլ ստույգ չգիտի, թե քանի՞սն են այդ ներկայացուցիչները և հյուպատոսները, ու՞մ կողմից են նշանակվել և ո՞ր վայրերում են գտնվում, այսպես գրությունը կունենար հասցեներ և հասցեատերեր։ Այս ներկայացուցիչները գործելով միևնույն պետության սահմաններում, հաճախ հակասության մեջ էին մտնում իրար հետ, վարկաբեկում էին և՛ իրենց, և՛ Հայաստանի Հանրապետության կառավարությանը։ Այդ պատճառով տեղական իշխանությունները պատշաճ վերաբերմունք չէին դրսևորում նրանց նկատմամբ, չէին կարողանում կողմնորոշվել, թե նրանցից ո՞վ է ներկայացնում Հայաստանի Հանրապետությունը, որևէ կոնկրետ հարցի վերաբերյալ ու՞մ տեսակետն է Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական տեսակետը։

Այդպիսի խառը իրավիճակ էր ստեղծվել Սիմֆերոպոլ քաղաքում 1920 թ. գարնանը։ Սիմֆերոպոլի պարետն այդ կապակցությամբ տեղյակ էր պահում Սիմֆերոպոլի հայկական համայնքային խորհրդի նախագահին, որ մինչև Հայաստանի Հանրապետության կառավարությունից պաշտոնական հաղորդագրություն ստանալն ինքը դադարեցնում է հարաբերությունները Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչների հետ<sup>12</sup>։

Օտարերկրյա պետություններում Հայաստանի ներկայացուցչությունների բացասական կողմերից մեկն էլ այն էր, որ չկար նրանց կազմավորումը և գործունեությունը կանոնակարգող օրենսդրական բազա։ Գոյություն ունեին միայն մի քանի ակտեր, որոնք վերաբերում էին զիվանագիտական գրադրության վարման կարգին, հրահանգներ, որոնք տրված էին որևէ պետությունում գտնվող ներկայացուցիչին և մի քանի այլ ակտեր, որոնք, սակայն, չէին կարող ապահովել այդ ներկայացուցչությունների պատշաճ գործունեությունը։ Անգամ ստեղծվել էր այնպիսի վիճակ, երբ յուրաքանչյուր նախարարություն ուներ իր ներկայացուցիչն օտարերկրյա պետությունում, որն անմիջական կապերի մեջ էր մտնում տեղի կառավարության հետ, կնքում էր պայմանագրեր և այդ ամենի մասին տվյալ պետությունում Հայաստանի Հանրապետության զիվանագիտական ներկայացուցիչը երբեմն իմանում էր թերթերից կամ երրորդ կողմի միջոցով։ Սա, իհարկե, լրջորեն հարվածում էր Հայաստանի հեղինակությանը։ Այսպիսի վիճակ էր տիրում մոտ երկու տարի և տարբեր պետություններում գործող Հայաստանի Հանրապետության զիվանագիտական ներկայացուցիչներից ստացված բազմաթիվ բողոքների ու առաջարկությունների հիման վրա 1920 թ. մայիսի 27-ին ընդունվեց «Հայաստանի Կառավարության արտասահմանյան ներկայացուցչության եզակիության մասին» օրենքը։ Այդ օրենքը որոշակի հստակություն մտցրեց վերոհիշյալ հարցի կարգավորման ասպարեզում՝ սահմանելով, որ «1) Առանձին միևնույն պետությունները կարող են ուղարկել իրենց ներկայացուցիչները արտասահման միայն Սինիստրների խորհրդի ամեն մի դեպքի համար առանձին որոշմամբ»։

2) Առանձին միևնույն պետությունների ներկայացուցիչները արտասահմանում համարվում են այն զիվանագիտական միսիային կամ հյուպատոսությանը կից, որոնց շրջանն են իրենք առաքված։

3) Տեղական իշխանությունների կամ օտար պետությունների ներկայացուցիչների հետ բոլոր բանակցությունները պետք է վարվեն միայն Հայաստանի կառավարության տեղական պաշտոնական ներկայացուցչի միջոցով»<sup>13</sup>։

Անդրադառնալով այն հարցերին, թե ինչպես պետք է այժմ կազմակերպվի Հայաստանի Հանրապետության զիվանագիտական ներկայացուցչությունը, հարկ ենք համարում կանգ առնել հետևյալ խնդիրների վրա։

<sup>11</sup> Նույն տեղում, ֆ. 277, ց. 1, գ. 1, ք. 14։

<sup>12</sup> Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 6, ք. 65։

<sup>13</sup> Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 153, ք. 37։

Առաջին. դիվանագիտական ներկայացուցչությունների ստեղծման հար-  
սը բացի քաղաքական նկատառումներից պետք է կապել նաև հանրապետու-  
թյան ֆինանսական վիճակի հետ: Արտաքին գործերի նախարարության կող-  
մից կատարված հաշվարկների համաձայն արտասահմանյան որևէ պետու-  
թյունում դիվանագիտական ներկայացուցչության գործունեության ապահով-  
ման համար հանրապետությունը նրան պետք է հատկացնի տարեկան մոտ  
100000 դրամար<sup>14</sup>, Դա նշանակում է, որ նպատակահարմար է դես-  
պանատներ բացել այն երկրներում, որոնց հետ հանրապետությունն ավելի  
շատ է կապված արտաքին քաղաքական և տնտեսական կապերով: Դրանք,  
առաջին հերթին, մեր հարևան պետություններն են՝ Վրաստանի Հանրապե-  
տությունը, Ադրբեջանի Հանրապետությունը, Ռուսաստանյան Դաշնությունը,  
Թուրքիան և Իրանը, երկրորդ հերթին, այն պետությունները, որոնք միջազ-  
գային քաղաքականության ձևավորման գործում մեծ դեր են խաղում և  
նրանց հետ մշտական կապը տվյալ ժամանակաշրջանում Հայաստանի հա-  
մար կենսական նշանակություն ունի: Վերջին դատողության իմաստն այն  
չէ, որ Հայաստանը պետք է փորձի այդ երկրների հովանավորությամբ և օգ-  
նությամբ կարգավորել իր հարցերը, այլ այն, որ դրանց հետ պետք է ձևա-  
վորվեն երկկողմ իրավահավասար կառուցողական հարաբերություններ: Ինչ  
վերաբերում է այլ երկրներին, ապա կարծում եմ, որ ամենևին էլ պար-  
տադիր չէ, որպեսզի Աֆրիկայի, Ասիայի կամ Լատինական Ամերիկայի յու-  
րաքանչյուր երկրում Հայաստանն ունենա առանձին ներկայացուցչություն:  
Այստեղ կարելի է բավարարվել տարածաշրջանային ներկայացուցչություններ  
հիմնելով, իսկ այն երկրներում, որոնց հետ Հայաստանը ավելի շատ կապ-  
ված է գիտական, մշակութային և հոգևոր կապերով, քան քաղաքական, կա-  
րելի է հիմնել հյուպատոսություններ:

Երկրորդ. դիվանագիտական ներկայացուցչություններ կազմավորելու և  
պատշաճ ձևով դրանց գործունեությունը կանոնակարգելու համար մեծ նշա-  
նակություն ունի համապատասխան օրենսդրական բազայի ստեղծումը: Այդ  
բնագավառում առաջին քայլերը եղան Հայաստանի Հանրապետության Գե-  
րագույն խորհրդի կողմից 1992 թ. երկու օրենքների ընդունումը. «Հայաս-  
տանի Հանրապետության դիվանագիտական աստիճանների մասին» և «Ար-  
տասահմանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայա-  
ցուցչությունների կարգավիճակի մասին»<sup>15</sup>: Առաջինով սահմանվեցին Հա-  
յաստանի Հանրապետության դիվանագիտական աստիճանները, դրանց  
շնորհման կարգը, շնորհման իրավունք ունեցող պաշտոնատար անձինք:  
Երկրորդ օրենքով սահմանվեցին դիվանագիտական ներկայացուցչության  
պարտականությունները, Հայաստանի Հանրապետության դեսպանին, դես-  
պանորդին և գործերի հավատարմատարին նշանակելիս նրանց տրվող փաս-  
տաթղթերը, նրանց կողմից իրենց պարտականությունների կատարման  
անցնելու կարգը, դիվանագիտական ներկայացուցիչների հետ կանչման կար-  
գը, դիվանագիտական ներկայացուցչի գործունեության դադարեցման հիմ-  
քերը և մի շարք այլ դրույթներ: Այս օրենքի նշանակությունն այն է, որ որո-  
շակիացվում է դիվանագիտական ներկայացուցչության կարգավիճակը, հրա-  
տակ սահմանվում նրա գործունեության ոլորտը: «Արտասահմանում Հայաս-  
տանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների կար-  
գավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրական կող-  
մերից մեկն էլ այն է, որ թույլատրվեց արտասահմանյան պետությունում  
Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչին միաժա-  
մանակ նշանակել Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ՝ ցանկա-  
ցած միջազգային կազմակերպությունում: Այժմյան պայմաններում, երբ  
հատկապես շատ է զգացվում դիվանագիտական աշխատանք կատարելու  
համար պատրաստված կադրերի պակասը, այս դրույթը մեծ նշանակություն

<sup>14</sup> Տվյալները ստացվել են ՀՀ ԱԳՆ գործերի կառավարչությունից:

<sup>15</sup> Տե՛ս ՀՀ Գե Տեղեկագիր, 1992, № 9, հոդ. 204, № 11, հոդ. 267:



է ստանում: Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդում այս օրենքի նախագծի քննարկման ժամանակ տարակարծություններ ծագեցին երկու հարցերի կապակցությամբ: Առաջինը վերաբերում էր դիվանագիտական ներկայացուցիչներ նշանակելու կարգին, իսկ երկրորդը՝ դիվանագիտական ներկայացուցչի քաղաքացիությանը: Առաջին հարցի վերաբերյալ կարծիքներ հայտնվեցին, որ դիվանագիտական ներկայացուցիչ նշանակելիս անհրաժեշտ է, որ թեկնածուի վերաբերյալ իր համաձայնությունը տա նաև Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի արտաքին հարաբերությունների հարցերի մշտական հանձնաժողովը: Այս դրույթի կապակցությամբ Գերագույն խորհուրդն այդպես էլ չկարողացավ կողմնորոշվել և հարցի կարգավորումը վերահիշյալ օրենքի շրջանակներից դուրս մնաց: Մեր կարծիքով առաջ էր քաշվում ոչ ճիշտ տեսակետ հետևյալ հիմնավորումով՝ «Հայաստանի Հանրապետության նախագահի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8 հոդվածը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության նախագահն է ներկայացնում հանրապետությունը միջազգային հարաբերություններում, իրականացնում արտաքին հարաբերությունների ընդհանուր ղեկավարումը և նշանակում դիվանագիտական ներկայացուցիչներին<sup>16</sup>, Սա նշանակում է, որ օրենքով, արդեն իսկ, քննարկվող հարաբերությունների կարգավորումը վերապահված է Հայաստանի Հանրապետության նախագահի իրավասությանը և քանի որ Հայաստանը հռչակել է օրենսդիր և գործադիր իշխանությունների տարանջատումը, ապա պետք է գործադիր իշխանությունը հնարավորություն տալ ինքնուրույն կարգավորելու իր տնօրինմանը ենթակա հարցերը, իսկ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը կարող է մասնակցել արտաքին քաղաքականության վարմանը՝ վավերացնելով կամ չհղյալ հայտարարելով Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը, ինչպես նախատեսվում է «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10 հոդվածի 9 կետով<sup>17</sup> կամ, անհրաժեշտության դեպքում, «Արտասահմանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսվող կարգով ետ կանչելով դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարին:

Երկրորդ հարցը, որը վերահիշյալ օրենքի նախագծի քննարկման ժամանակ տարակարծությունների տեղիք տվեց, ինչպես վերն ափնարկվեց, վերաբերում էր դիվանագիտական ներկայացուցիչների քաղաքացիությանը: Այդ կապակցությամբ տեսակետ հայտնվեց, որ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչներ կարող են նշանակվել միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիները: Ի վերջո այս հարցը նույնպես մնաց առկա և չընդգրկվեց օրենքի կարգավորման շրջանակներում: Անհրաժեշտ է նշել, սակայն, որ այդ հարցն արդեն իսկ կարգավորված է Վիեննայի 1961 թ. ապրիլի 18-ի «Դիվանագիտական հարաբերությունների մասին» կոնվենցիայով, որի 8-րդ հոդվածում նշվում է. «1. Ներկայացուցչության դիվանագիտական անձնակազմի անդամները սկզբունքորեն պետք է լինեն հավատարմագրող պետության քաղաքացիներ:

2. Նստավայր պետության քաղաքացիներ հանդիսացող անձանց թվից ներկայացուցչության դիվանագիտական անձնակազմի անդամներ չեն կարող նշանակվել այլ կերպ, քան այդ պետության համաձայնությամբ, ընդ որում այդ համաձայնությունը ցանկացած ժամանակ կարող է վերացվել:

3. Նստավայր պետությունը կարող է իրեն նույն իրավունքը վերապահել երրորդ պետության այն քաղաքացիների նկատմամբ, որոնք միաժամանակ չեն հանդիսանում հավատարմագրող պետության քաղաքացիներ»<sup>18</sup>:

<sup>16</sup> Նույն տեղում, 1991, № 15, հոդ. 316.

<sup>17</sup> Նույն տեղում, № 22, հոդ. 462:

<sup>18</sup> Международное право в документах, М., 1969, с. 211.

Նրորորդ, Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության վարման ասպարեզում հնարավոր խառնաշփոթը բացառելու, ինչպես նաև պետական կառավարման հանրապետական ու տեղական մարմինների, գերատեսչությունների, ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների ու դրանց պաշտոնատար անձանց և օտարերկրյա պետական մարմինների, ներկայացուցչությունների ու դրանց պաշտոնատար անձանց հարաբերությունների վրա պետականորեն ներազդելու նպատակով կարևորվում է նրանց հաղորդակցման որոշակի կարգի սահմանումը: Մեր կարծիքով վերոհիշյալ մարմիններին ու պաշտոնատար անձանց պետք է գործելու լիակատար ազատություն տալ, երբ հարցը վերաբերում է գերատեսչական, մասնագիտական խնդիրներին, իսկ գործընթացի քաղաքական կողմը պետք է ապահովեն արտաքին հարաբերությունների մարմինները: Այդ մարմինները կարող են կնքել միջազգային պայմանագրեր՝ նախապես դրանց տեսքով համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հետ: Ընդ որում, վերջինս միայն հետևում է, որպեսզի կնքվող միջազգային պայմանագրերը համապատասխանեն միջազգային իրավունքի նորմերին և հանդիսանում է այդ պայմանագրերի ավանդապահ, որը հնարավորություն է տալիս հստակ պատկերացնել այլ պետությունների հետ հարաբերությունների վիճակը նաև այս մակարդակում:

Եվ մեկ կարևոր հարցի մասին ևս, որը կարգավորվեց Հայաստանի Հանրապետության նախագահի 1992 թ. մայիսի 5-ի «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման հանրապետական և տեղական մարմինների, գերատեսչությունների, պետական ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների միջազգային գործունեության որոշ հարցերի մասին» հրամանագրով, որի 1. կետի ըստ ենթակետը սահմանում է, որ «վերոհիշյալ մարմինները և դրանց պաշտոնատար անձինք Հայաստանի Հանրապետության դիվանագիտական և այլ ներկայացուցչությունների, միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա պետական մարմինների, դիվանագիտական և այլ ներկայացուցչությունների, դրանց պաշտոնատար անձանց հետ պաշտոնապես հաղորդակցվում են Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջոցով կամ վերջինիս համաձայնությամբ՝ անմիջականորեն»<sup>19</sup>:

Չորրորդ. մեծ նշանակություն ունի դիվանագիտական աշխատանք կատարելու համար պատրաստված կադրային կորպուսի ձևավորումը: Երբ կազմավորվեց Հայաստանի Հանրապետության նոր Գերագույն խորհուրդը, ինչպես արդեն նշվեց, Հայաստանի Հանրապետությունը շունչ առավ դիվանագիտական ներկայացուցչություններ, իսկ արտաքին գործերի նախարարությունը աակավաթիվ և ըստ էության ձևական բնույթի մի մարմին էր: Այնպես որ, պետք է լրջորեն զբաղվել դիվանագիտական կադրերի պատրաստման գործով:

Այն հարցը, թե ինչ ձևով Հայաստանը դուրս կգա ստեղծված ծանր վիճակից, զգալի շափով կախված է նաև Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչների անձնական, գործնական և այլ հատկանիշներից, տեղի իշխանությունների հետ համագործակցությունը լավագույն տարբերակով առաջ տանելու և հայ համայնքի ուժերը առկայության դեպքում նրա ընդհանուր գործին ծառայեցնելու կարողությունից:

<sup>19</sup> 22 Գե Տեղեկագիր, 1992, № 9, հոդ. 232:



# 1. О НЕКОТОРЫХ ПРАВОВЫХ ВОПРОСАХ ФОРМИРОВАНИЯ ДИПЛОМАТИЧЕСКОГО ПРЕДСТАВИТЕЛЬСТВА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Г. А. МАРКАРЯН

## Резюме

В сентябре 1991 г. года Армения была объявлена независимой республикой. На август 1992 года ее независимость признали 104 страны мира, а с 59-ю странами были установлены дипломатические отношения. Для успешного ведения внешней политики возникла необходимость учреждения дипломатических представительств в иностранных государствах. В этом процессе надо руководствоваться и политическими соображениями, и финансовыми возможностями Республики. Для формирования и деятельности дипломатических представительств на надлежащем уровне имеет большое значение создание соответствующей законодательной базы. Первостепенное значение имеет формирование кадрового корпуса, подготовленного к дипломатической работе.